ԱՐՑԱԽԻՆ ՀՁՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ Է ՊԵՏՔ

Զոկատը դեռ նոր էր մեկնել Արցախ (դա 1988թ. աշունն էր), երբ զգացինք, թե որքան կարեւոր է ամուր թիկունք ունենալը: Դե, առաջին շրջանում բոլոր տեսակի օգնությունները ստանում էինք տեղացիներից: Դրության հետագա վատթարացման հետ կապված դժվարացավ նաեւ արցախցու նյութականը, ապրուստը ծանրացավ: Սակայն էլի արցախցին է մեզ պահում, կիսում վերջին պատառը: Հայաստանն էլ այնպիսի ծանր տնտեսական վիճակում է գտնվում, որ ամոթ է նրանից որեւէ բան պահանջել: Չէ, խնդրում եմ ինձ ճիշտ հասկանալ. մենք երբեք մեր «գործերի» համար հատուցում չենք պահանջել: Հարցը ուրիշ է:

Մենք դարաբաղցու համար «Հայաստանի խոխեքն» ենք: Հայաստանը, հայաստանցին դարաբաղցու աչքին պետք է լինի ուժեղ, հզոր, հարուստ. չէ՞ որ Մայր է, Մայր հայրենիքն է:

Այո, դարաբաղցուն պետք է հզոր հայրենիք: Հայրենիք, որը հարուստ է, ազատ, քաղաքականապես եւ տնտեսապես հզոր: Մի տերություն, որը կարող է իր գիրկն ընդունել ոչ միայն Արցախը, այլեւ մեր պապենական ճյուս հողերը: Արցախցուն դա՛ է հետաքրքրում, տանջում:

Կարո՞ղ է արդյոք մայր հայրենիքն ընդունել, օգնել, պաշտպանել Արցախին: Սա է խնդիրը: Եվ այս խնդրի պատասխանը առաջին հերթին նա սպասում է մեզնից:

Այստեղ շատ կարեւոր դեր է խաղում հոգեւոր կապը, ներքին հույսի, հավատի զգացումները: Ոչ ինքը, արցախցին մենակ չէ, կա հզոր հայրենիք, որը կարող է եւ ունակ է պաշտպանելու իրեն եւ իր երեխաներին, իր ծնողների գերեզմանը, հայրենի հողերը: Ինչեւէ, փառք Աստծո, կա՛, քիչ թե շատ, սակայն կա, օգնում է Մայր Հայաստանը, չի մոռանում մեզ, Արցախը, մեր հայրենի շենները:

Ինչու՞ եմ լավատեսորեն տրամադրված, որովհետեւ Հայաստանը մենակ չէ, կա նաեւ հայկական սփյուռք, որում ապրող հայերը, համոզված եմ, շատ են ցանկանում օգնել Արցախին: Եվ դա օրըստօրէ շոշափելի է դառնում: Այո՛, մենք միայնակ չենք: Ունենք հզոր սփյուռք: Սփյուռք, որը պարտավոր է օգնել Արցախի վերամիավորմանը Մայր Հայաստանին: Քանի որ Արցախը մեր պահանջն է, բողոքը, բռունցքը: Արցախի խնդիրը մեր պահանջատիրության խնդիրն է: Իսկ չէ՞ որ բացի Արցախից ունենք նաեւ կորցրած Արեւմտյան Հայաստան՝ մեր ճյուս հայրենի հողերը: Եվ յուրաքանչյուր սփյուռքահայ պարտավոր է խղճի թելադրանքով օգնել արցախցուն՝ հանուն մեր ազգի հզորության, նրա վաղվա օրվան, այն օրվան, որը սփյուռքահային կվերադարձնի նաեւ իր Արցախը, իր հայրենի եզերքը՝ Արեւմտահայաստանը:

Հատկապես շնորհակալության խոսքեր կարող ենք ասել Կարմիր խաչի ընկերներից եւ այլ կազմակերպություններից:

Շնորհակալ ենք, Ֆոր մեզ չեն մոռացել: Դա շատ կարեւոր է մեզ համար, հատկապես թուրք օմոնականներով շրջապատված Արցախում:

Այդուհանդերձ, արցախցուն օգնողը առաջին հերթին ինքն է, իր ոգին, իր բազկի ուժը, գիտակցությունը: Եվ հետո նոր՝ «Հայաստանի խոխեքը», Հայաստանից եկող բեռնված ուղղաթիռները, Հայաստանն ու Սփյուռքը:

«ՄԽՈ»